ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 257-Ա **06 մայիսի 2026 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի 2026 թվականի ապրիլի 29-ի N 95/8/68-26 գրությունը,

որոշում եմ՝

1. 2026 թվականի հունիսի 17-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևանա լճում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը զբոսանավում առաջացած հրդեհի դեպքում» թեմայով:
2. ՈՒսումանավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության գնդապետ Գարեգին Հակոբյանին:
3. Հաստատել՝

1) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության մտահղացումը (սխեմայի տեսքով)՝ համաձայն N 2 հավելվածի.

3) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման պլանը՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Ուսումանավարժությանը ներգրավել՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությանը և մասնակից ստորաբաժանումներին.

2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Գեղարքունիքի մարզային ջրային պարեկային ծառայությունից երկու կարգախումբ (համաձայնությամբ)

3) «Գավառի բժշկական կենտրոն» և «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություններից աղետների բժշկության մեկական թիմեր (համաձայնությամբ):

5. Ուսումնավարժության ղեկավար Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության գնդապետ Գարեգին Հակոբյանին՝

1) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը համաձայն ուսումնավարժության օրացուցային պլանի.

2) կազմակերպել համագործակցություն ուսումնավարժությանը ներգրավված ուժերի միջև.

3) ուսումնավարժության նախապատրաստման ընթացքում տեղական զանգվածային լրատվամիջոցներով բնակչությանը տեղեկացնել ուսումնավարժության բնույթի մասին.

4) ուսումնավաժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2026 թվականի հունիսի 16-ին.

5) ուսումնավարժությունն անցկացնելուց հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը և լուսանկարներ:

6. Ուսումանավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան իրավիճակներում գործելու պլանները.

2) պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով.

3) ուսոումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

4) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարված միջոցառումների մասին.

5) գործնական միջոցառումներ իրականացնելիս խստագույնս պահպանել անվտանգության կանոնները:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

06.05.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503 Կ.

ՍԱՐԳՍՅԱՆ

Ք. Գավառ

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության

Գեղարքունիքի մարզպետի

2026 թվականի Մայիսի 06 -ի

N 257-Ա որոշման

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ
ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողներ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
Փաստաթղթերի մշակում				
1.	Ելակետային տվյալների որոշում՝ անցկացման ժամկետ, վայր, մասնակիցների կազմ	մինչև 30.04	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ	
2.	Կազմակերպման և անցկացման վերաբերյալ ուսումնվարժության ղեկավարի որոշման (հրամանի) նախագծի մշակում	մինչև 30.04	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ	
3.	ՑՀՏՈՒ անցկացման պլանի մշակում	մինչև 30.04	ԲՊԲ ավագ հրահանգիչ	
Ուսումնավարժության գործնական տեղամասերի նախապատրաստում				
4.	Ուսումնավարժության վայրի տեղազննում	մինչև 15.06	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ	
5	Տեղամասերի նախապատրաստում	մինչև 16.06	Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ	

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2026-05-06 17:19:39 GMT+4
Հավաստված է EKENG-ի կողմից

գլխավոր քարտուղար՝

Սիմոն Մանուկյան

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2026 թվականի մարտի 06-ի
N 257-Ա որոշման



Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2026 թվականի 06 հոկտեմբեր-ի
N257-Ա որոշման

Պլան

Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության

ՈՒսումնավարժության թեման «Հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը զբոսանավում առաջացած հրդեհի դեպքում»:

ՈՒսումնավարժության նպատակները՝

1. Վարժանքի ընթացքում ստուգել և կատարելագործել ՄՓՎ ստորաբաժանումների անձնակազմի ունակությունները՝ իրենց առջև դրված հրդեհաշիջման և ջրափրկարարական խնդիրների լուծման ուղղությամբ:

2. Կատարելագործել անձնակազմի կազմակերպչական և գործնական ունակությունները հրդեհաշիջման և ջրափրկարարական աշխատանքների ժամանակ:

3. Կատարելագործել փոխհամագործակցությունը հրշեջ-փրկարարական, ջրափրկարարական և արագ արձագանքման խմբերի միջև:

ՈՒսումնավարժության մասնակիցները՝

- ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչություն և ենթակա ստորաբաժանումներ.
- ՆԳՆ Ոստիկանության Գեղարքունիքի մարզային ջրային պարեկային ծառայությունից 2 կարգախումբ:
- «Գավառի բժշկական կենտրոն» և «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություններից աղետների բժշկության մեկական թիմեր.

ՈՒսումնավարժության անցկացման օրը և ժամը՝ - 17.06.2026թ. ժ 11^{00} – 12^{30}

ՈՒսումնավարժության անցկացման վայրը՝- ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանա լիճ, «Նոյ Լենդ» հանգստյան գոտու հարակից տարածք:

Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության մտահաղացում՝ 17.06.2026թ.-ին ժամը 11^{00}–ի սահմաններում Սևանա լճի վրա գտնվող զբոսանավում հրդեհ է բռնկվել, որում գտնվում են քաղաքացիներ և սպասարկող անձնակազմը: Զբոսանավի սպասարկող անձնակազմից 2-ը ստացել են տարբեր աստիճանի այրվածքներ, քաղաքացիներից 5-ը խուճապից նետվել են լիճը, որոնցից 1-ը ջրահեղձվել է:

Նյութատեխնիկական ապահովումը՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ և վարժանքին ներգրավված ստորաբաժանումների հրդեհաշիջման համար նախատեսված գույք-սարքավորումներ, 2 մոտորանավակներ, ձեռքի ռադիոկայաններ, բարձրախոս, կարմիր-սպիտակ սահմանազատման ժապավեններ, լաստանավ, վրան, 1 ավտոբաք, ջրասուզական պարագաներով համալրված «Գազել» մակնիշի ավտոմեքենա:

Ուսումնավարժության անցկացման կարգը

Հ/հ	ԺԱՄԱ-ՆԱԿԸ (աստղաբաշխական)	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1	11:00-11:02	Գեղարքունիքի ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումներին ազդարարում դեպքի մասին:	Գեղարքունիքի ՄՓՎ բոլոր ենթակա ստորաբաժանումների ն հաղորդվում է ահազանգ՝ զբոսանավի հրդեհի վերաբերյալ: Հրամայում է իրականացնել անձնակազմի հավաք և ահազանգել արագ արձագանքող ծառայություններին:	Ստանալով ահազանգ արտակարգ դեպքի վերաբերյալ՝ դեպքի վայր է մեկնում Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի ՀՓՋ-ից և ՀՋՋ-ից մեկական մարտական հաշվարկներ, իսկ մնացած ստորաբաժանումներից, որպես օգնություն, ներգրավվում են 8 փրկարարներ:	Հետևում է ազդարարման ընթացքին:
2	11:02-11:17	Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի ՀՓՋ-ի, ՀՋՋ-ի, մասնակից ենթակա ստորաբաժանումների և հերթապահ ծառայությունների արձագանքող ուժերի ժամանում դեպքի վայր:	Ներկայացնում է ստեղծված իրավիճակը, կատարում խնդրադրում, միաժամանակ հրամայում է խստագույնս պահպանել անվտանգության	Գեղարքունիքի ՄՓՎ Գավառ ՀՓՋ-ից և ՀՋՋ-ից մեկական մարտական հաշվարկ, Գեղարքունիքի ՄՓՎ մասնակից ենթակա ստորաբաժանումների ծառայողներ, Գավառի և Սևանի ԲԿ-ներից մեկական աղետների բժշկության թիմեր, ոստիկանության ջրային պարեկների ծառայությունից 2 կարգախումբ: Խմբերը ժամանում են դեպքի վայր և տեխնիկաները տեղակայում են աշխատանքների կազմակերպման համար նախատեսված տեղերում: Մասնակցում են ղեկավարի կողմից իրականացվող խնդրադրմանը:	Հետևում է ստորաբաժանումների գործողություններին:

			կանոնները:		
3	11:17-11:27	Հետախուզության կազմակերպում և իրականացում:	Տալիս է հրաման՝ հետախուզություն անցկացնելու վերաբերյալ:	Կատարվում է հետախուզություն, որի ընթացքում պարզ է դառնում, որ հրդեհը բռնկվել է զբոսանավի շարժիչի անսարքության և վառելիքի արտահոսքի պատճառով: Այրվում է զբոսանավի տախտակամածը և նավապետի սենյակի մի մասը: Պարզ է դառնում, որ հրդեհի հետևանքով 2 մարդ ստացել է տարբեր աստիճանի այրվածքներ, 5 մարդ խուճապահար նետվել է լիճ, որոնցից 1-ը ջրահեղձվել է: Հետախուզության ավարտից հետո ուսումնավարժության ղեկավարը, գնահատելով ստեղծված իրավիճակը, հրամայում է անհապաղ սկսել աշխատանքները՝ ըստ համարակալած տեղամասերի:	Հետևում է հետախուզության իրականացման գործընթացին:
4	11:25-11:30	Կառավարման կետի ծավալում:	Տալիս է հրաման՝ կառավարման կետ ծավալելու վերաբերյալ:	Ծավալվում է կառավարման կետ, որտեղ անընդհատ ստացվում է տեղեկատվություն՝ իրավիճակի և իրականացվող միջոցառումների վերաբերյալ, որոշվում են ուժերի կենտրոնացման հիմնական ուղղությունները, ուժերի և միջոցների բաշխումը՝ ըստ աշխատանքային տեղամասերի:	Հետևում է կառավարման կետի ծավալման աշխատանքներին:
5	11:30-11:50	Փրկարարական աշխատանքների կազմակերպում և իրականացում:	Տալիս է հրաման՝ փրկարարական և ջրափրկարարական աշխատանքներ սկսելու վերաբերյալ:	**Տեղամաս-1**-ում ջրասուզակ-փրկարարները իրականացնում են լիճ նետված քաղաքացիների ջրից դուրս բերում մոտորանավակով և, առաջին օգնություն ցուցաբերելով, տեղափոխում են տեսակավորման կետ ու հանձնում բժշկական թիմերին, որտեղ նրանց տրվում է առաջին բուժօգնություն, որից հետո տեղափոխվում են մոտակա ԲԿ-ներ: **Տեղամաս-2**-ում այրվածք ստացած 2 քաղաքացուն ջրային պարեկները ցուցաբերում են առաջին օգնություն, այնուհետև մոտորանավակով տեղափոխում ափում տեղակայված տեսակավորման կետ ու հանձնում բժշկական թիմերին, որտեղ տուժածներն անմիջապես ստանում են առաջին բուժօգնություն և տեղափոխվում են մոտակա ԲԿ-ներ: **Տեղամաս-2**-ում ջրասուզակը իրականացնում է ջրահեղձված քաղաքացու դուրս բերում Սևանա լճից:	Հետևում է գործողությունների իրականացմանը:

6	11:50-12:05	Հրդեհաշիջման իրականացում:	Տալիս է հրաման՝ հրդեհաշիջման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ:	**Տեղամաս-4**-ում ուսումնավարժության ղեկավարի հրամանով ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ Գավառի ՀՓՋ-ի անձնակազմը մոտորանավակի վրա տեղադրված ջրային պոմպի միջոցով կատարում է հրդեհաշիջման աշխատանքներ:	Հետևում է հրդեհաշիջման ընթացքին:
7	12:00-12:10	Առաջին բուժօգնության ցուցաբերում:	Հետևում է առաջին բուժօգնության ցուցաբերման գործընթացին:	Գավառի և Սևանի ԲԿ-ների աղետների բժշկության թիմերը և Գեղարքունիքի ՄՓՎ ստորաբաժանումներից ներգրավված ծառայողները ծավալում են տուժածների տեսակավորման կետ, ընդհանուր թվով 6 տուժածներին տեղափոխում են տեսակավորման կետ և ցուցաբերում են առաջին բուժօգնություն, այնուհետև, ըստ առաջնահերթության, շտապ տեղափոխում են Գավառի և Սևանի ԲԿ-ներ:	Հետևում է աշխատանքների կարարման ընթացքին:
8	11:15-12:30	Հասարակական կարգի պահպանություն:	Հետևում է հասարակական կարգի պահպանման գործընթացին:	Ոստիկանության ջրային պարեկների կարգախումբը իրականացնում է երթևեկության սահմանափակում և հասարակական կարգի պահպանություն:	Հետևում է աշխատանքների կատարման ընթացքին:
9	12:20-12:30	ՈՒսումնավարժության ավարտ և արդյունքների ամփոփում:	Ուսումնավարժության ղեկավարը գնահատում է ուսուցանվողների գործողությունները, նշելով թերությունները՝ տալիս հանձնարարականներ դրանց վերացման ուղղությամբ և հայտարարում է ուսումնավարժության ավարտ:	ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ պետի գլխավորությամբ անցկացվում է ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ամփոփը: Մասնակցում են բոլոր ներգրավված ստորաբաժանումների ծառայողները:	

ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՈՒԺԵՐԻ և ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

Քանի որ հրդեհաշիջումը իրականացվում է մոտորանավակի և մոտոպոմպի միջոցով, ուստի հաշվարկներ չեն կատարվում:

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ՝ ՍՈՒՐԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ